


Վ. Մ. ՅԻԳԱՆՈՎ



ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱ-
ՏԸՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻՆ
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼԸ ՅԵՎ
ԿՈՒՏՆՏԵՍԱՅԻՆ ՊԱՏԻ ԹԵՐԹԵՐԻ
ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԿՈՒՏՆՏԵՍԱՅԻՆ ՅԵՎ, ԲՐԻԳԱԴԱՅԻՆ ՊԱՏԻ ԹԵՐԹԵՐԻ
ԽՄԲԱԳԻՐՆԵՐԻ ՀԵՌԱԿԱ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ.

07

3-49

ՀԱՅԿ. ԽՍՀ-ԺԿԽ-Ի ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ «ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅՍՍԱՆ»
ՅԵՐԵՎԱՆ

1939

697

19 JUN 2009

Վ. Մ. ՅԻԳԱՆՈՎ

07.
3-49

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱ-
ՏԸՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻՆ
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼԸ ՅԵՎ
ԿՈՒՏՆՏԵՍԱՅԻՆ ՊԱՏԻ ԹԵՐԹԵՐԻ
ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԿՈՒՏՆՏԵՍԱՅԻՆ ՅԵՎ ԲՐԻԳԱԴԱՅԻՆ ՊԱՏԻ ԹԵՐԹԵՐԻ
ՀԵՌԱԿԱ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ. 1939 թ.

ՀԱՅԿ ԽՍՀ ԺԿԽ-Ի ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ „ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ“
ՑԵՐԵՎԱՆ
1939


26 AUG 2013

15092

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

եջ

1. Համամիութենական գյուղատնտեսական
ցուցահանդեսի նշանակությունը 3—10
2. Մամուլի պովիլյոնը ցուցահանդեսում . . 11—16
3. Լավագույն պատի թերթերը ցույց կտրվեն
ցուցահանդեսում 17—20
4. Գլխավոր լոգիկը 21—25
5. Ցուցահանդեսին նախապատրաստվելը . . 26—29
6. Առաջավոր թերթի փորձը 30—36
7. Լայն ծավալները պատի թերթերի
մրցությունը 37—41



4092
39

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱ- ՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1939 թ. ոգոտոսի մեկին Մոսկվայում բացվում
և Համամիութենական Գյուղատնտեսական Ցուցա-
հանդեսը: Այն կշարունակվի և 1940 թվի ընթաց-
քում:

Գյուղատնտեսությունը հետագա վերելքի գոր-
ծում ցուցահանդեսի վերաբերյալ նշանակություն ու
ղերը ձևակերպված և ընկ. Վ. Մ. Մոլոտովի կող-
մից՝ նրա Համգ(բ)Կ 18-րդ համագումարում տված
զեկուցման մեջ,
նա առաջ.

«Գյուղատնտեսությունը վերելքի գործում կադ
մակերպող մեծ դեր պետք է խաղա այս տարի բաց-
վող Համամիութենական Գյուղատնտեսական Ցուցա-
հանդեսը: Այս ցուցահանդեսին կմասնակցեն գյու-
ղատնտեսությունը բոլոր ճյուղերի առաջավորները:
Իայց բանը միայն այդ չէ: Համամիութենական
Գյուղատնտեսական Ցուցահանդեսին մասնակցելու ի-
րավունք ստանալու համար, սահմանված են վորոշ
ցուցանիշներ կոլտնտեսությունների, ՄՏԿ-ների և
խորհրդատնտեսությունների, ինչպես նաև գյուղատնտե-
սության աշխատողների առանձին կատեգորիաների

Համար, այդ ցուցանիշները դիֆերենցիայի յենթարկելով ըստ կուլտուրաների, ձյուղերի և դյուղատնտեսական զոնաների: Այդ ցուցանիշները սահմանված են այնպես, վոր դրանք կոլտնտեսությունների և խորհանտեսությունների ամբողջ մասնայի կողմից կատարվելու գեպքում մեղանում ազահովված կլինի դյուղատնտեսության զծով յերրորդ հընգամյա պլանի առաջադրանքների վոչ միայն կատարումը, այլև գերակատարումը: Այսպիսով, Համամիութենական Գյուղատնտեսական Ցուցահանդեսը մի ամբողջ ծրագիր է տալիս դյուղատնտեսության վերելքի համար: Այն կծառայի դյուղատնտեսության առաջավորների համամիութենական ժողովրդականացման, նրանց աշխատանքի լավագույն արեւակների ժողովրդականացման և տարածման գործին: Այդ ցուցահանդեսը պետք է մրցություն առաջացնի կուլտնտեսություններին, ՄՏԿ-ներին և խորհանտեսությունների միջև, շրջանների, մարզերի և հանրապետությունների միջև: Նա կարող է և պետք է խոշոր դեր խաղա դյուղատնտեսության հետագա վերելքի կազմակերպման և յերրորդ հնգամյակի առաջադրանքների կատարման գործում»:

Խորհրդային Միության բոլոր հանրապետությունների, յերկրամասերի և մարզերի լավագույն կոլտնտեսությունները, խորհանտեսությունները, մեկ քենատրակտորային կայանները, կոլտնտեսային անասնաբուծական ֆերմաները ցուցահանդեսում լայնորեն ցույց կտան իրենց նվաճումները:

Գյուղատնտեսության առաջավորները և կազմա-

կերպիչները կցուցադրեն իրենց հաջողությունները՝ կոլտնտեսությունների ամրապնդման համար, սոցիալիստական դյուղատնտեսության զարգացման համար մղված պայքարում:

Ցուցահանդեսը արժանի կերպով կըրեսվորի մեր սոցիալիստական դյուղատնտեսության հաջողությունները: Այդ հաջողությունները մեծ են ու նշանակալից, ինչպես և սոցիալիզմի բոլոր պատմական հաղթանակները մեր յերկրում: Դրանք ձևով են բերված մեր ժողովրդի կողմից՝ բողբեմիկների կուսակցության և համայն աշխարհի աշխատավորների սիրելի առաջնորդ ընկեր Ստալինի ղեկավարությամբ:

Կարևորագույն հաղթանակն այն է, վոր յերկրորդ հնգամյակի (1933—1937 թ. թ.) պլանի հաջող կատարման հետևանքով ԽՍՀՄ-ում լուծված է յերկրորդ հնգամյակի հիմնական պատմական խնդիրը՝ վերջնականապես լիկվիդացիայի յեն յենթարկվել շահագործող բոլոր դատակարգերը, լիովին վոչնչացված են մարդուն մարդու կողմից շահագործում ծնող պառձանները և հասարակության բաժանումը շահագործողների և շահագործվողների:

Լուծված է սոցիալիստական հեղափոխության զգալարագույն խնդիրը, ավարտված է դյուղատնտեսության կոլեկտիվացումը, կոլտնտեսային կարգը վերջնականապես ամրապնդվել է:

Մեր յերկրում «հիմնականում իրականացված է կոմունիզմի առաջին ֆազան— սոցիալիզմը» (ՄՏԿ-ԼԻՆ): Մեզ մոտ աշխատավորներն աշխատում են վոչ թե կապիտալիստների ու կալվածատերերի, վոչ թե

տուեւորականների ու կուլակների համար, այլ իրենց համար, իրենց հարազատ սոցիալիստական պետութեան համար: Մեր բանվորները, գյուղացիները, խորհրդային ժողովրդական ինտելիգենցիան աշխատում են համերաշխորեն, ձեռք-ձեռքի տված, միասնական անբաժան ընտանիքով, Ստալինյան Սահմանադրութեան դրոշի ներքո: Մեր յերկրի աշխատավորները ցույց տվեցին ամբողջ աշխարհին ԽՍՀՄ-ի ժողովուրդների անխորտակելի միասնութիւնը, ժողովուրդ, վորը հաղթանակօրէն կառուցել է յերկրայնի մեկ վեցերորդ մասում սոցիալիզմը և հաջողութեամբ առաջ է ընթանում կոմունիզմի ճանապարհով:

Ստալինյան հնգամյակների տարիների ընթացքում չտեսնված չափով աճեցին սոցիալիստական արդյունաբերութիւնը և սոցիալիստական գյուղատնտեսութիւնը: Շատ առաջ գնացին ժողովրդական տնտեսութեան բոլոր ճյուղերը, նշանակալի չափով բարձրացավ ժողովրդական մասսաների բարեկեցութիւնը ու կուլտուրան: Ընկեր Ստալինը ՀամԿ(բ)Կ 18-րդ համագումարում տված իր պատմական զեկուցման մեջ մարքսիզմ-լենինիզմի հզոր լուսարձակով լուսավորեց այդ հաջողութիւնները և նշեց կոմունիստական հասարակութեան կառուցման հետագա խնդիրները: Ընկ. Մոլոտովը 18-րդ համագումարում իր տված զեկուցման մեջ հանրադրումարի բերեց յերկրորդ հնգամյակի առաջադրանքների հաղթական կատարումը և նշեց Ստալինյան յերրորդ

հնգամյակում կատարվելիք աշխատանքների հոյակապ ծրագիրը:

Վերջին հինգ տարիների ընթացքում աճեց և ամբողջով մեր գյուղատնտեսութիւնը: Կոլտնտեսութիւններում միացված են 18 միլիոն 800 հազար գյուղացիական տնտեսութիւններ կամ գյուղացիական բոլոր տնտեսութիւնների 93,5 տոկոսը:

«Դա նշանակում է, — ասաց ընկեր Ստալինը, — վոր կոլտնտեսութիւնները վերջնականապէս ամրացել ու ամրապնդվել են, իսկ տնտեսութեան սոցիալիստական սխառմը հիմա հանդիսանում է մեր հողագործութեան միակ ձեւը»:

Մեր սոցիալիստական գյուղատնտեսութիւնը — ամենախոշորն ու ամենամեքենայացվածն է աշխարհում: Կոլտնտեսութիւնների և խորհտնտեսութիւնների դաշտերում 1938 թվին աշխատում էին 483 հազար 500 արակտոր, 153 հազար 500 կոմբայն, 195 հազար 800 ապրանքատար ավտոմեքենա և շատ այլ գյուղատնտեսական մեքենաներ ու գործիքներ: Խորհրդային Պետութիւնը խորհտնտեսութիւններին հսկայական ոգնութիւն է ցույց տալիս: Կոլտնտեսութիւններին սպասարկելու համար ստեղծված են 6 հազար 350 մեքենատրակտորային կայաններ: Բարձրագույն դպրոցական հաստատութիւններ և տեխնիկումներ, բաց են թոցնված գյուղատնտեսութեան համար վորակյալ մասնադեաներ:

Հաղթանակած սոցիալիզմի յերկրում գյուղատնտեսութեան արագ վերելքի համար ստեղծված են բոլոր պայմանները: Յեւ այն աճում է տարեց տարի:

Յերկրորդ հնդամյակի ընթացքում գյուղատնտեսութ-
վան համախառն արտադրանքն ավելացավ ավելի
քան կիսով չափ: Կոլտնտեսություններն ու խորհ-
տրնտեսությունները հաջողությամբ կատարում են
ստալինյան առաջադրանքը և 1937 թվին ավելին ա-
վելի քան 7 միլիարդ փութ հացահատիկ: Ավելի քան
մեկ ու կես անդամ աճեց յերկրորդ հնդամյակում
անասնապահության արտադրանքը:

Այդ բոլոր հաջողությունների հիման վրա բարձ-
րացավ կոլտնտեսականների ունեւորությունը: Յերկ-
րորդ հնդամյակի տարիներին ընթացքում կոլտնտե-
սությունների զբաղմունքն անհերքելի ա-
վելի քան յերեք անգամ: Կոլտնտեսականների աշխո-
րեքին բաշխվող զբաղմունքն անհերքելի ավելա-
ցան 4,3 անգամ:

Ստալինական շարժումը, վորն ավելի ու ավելի
լայն ալիքով ծավալվում և ամբողջ յերկրում, ընդ-
գրկեց և գյուղը: Կոլտնտեսություններում աճեցին
և աճում են ստալինականների հրաշալի կազմեր,
սոցիալիստական հողագործությունների և անասնաբուծու-
թյան վարպետներ, կոլտնտեսությունների և կոյտըն-
տեսային արտադրության զանազան բնագավառների
գեկավարներ: Ընդ Մոլոտովը ՀամԿ(Բ)Կ 18-րդ հա-
մագումարում տված իր գեկուցման մեջ ասաց.

«... Կոլտնտեսությունների առաջադրանքները հա-
մախ աշխատանքի արտադրողականության բարձրաց-
ման սապարեզում ունեցած հաջողությունների մեջ
չեն գիշում բանվորներին: Մի՞թե քիչ որինակներ
կան, յերբ կոլտնտեսություններում առաջադրանքները,

ախանավոր արակտորիստները, կոմբայնավարներն ու
ողակավարները տվել են աշխատանքի արտադրողա-
կանություն աճման այնպիսի տեմպեր, վորոնց մասին
առաջ վոչ վոք չիր ել մտածում... Մի՞թե մեր ամ-
բողջ ժողովրդին ծանոթ չեն գյուղատնտեսության
այնպիսի առաջավոր մարգկանց անունները, ինչպես
Մարիա Դեմչենկոն, կոմբայնավարներ Կոլեսովը, Բո-
րինը, յեղբայրներ Ոսկինները, արակտորիստուհիներ
Պաշա Անգելինան և Պաշա Կովարդակը և շատ ուրիշ-
ները»:

Սոցիալիստական գյուղատնտեսություն հենց այդ
առաջադրանքների նվաճումները պետք է ցույց տրվեն
Համամիութենական Գյուղատնտեսական Ֆուցահան-
դեսում: Դրանք պետք է ցույց տրվեն այնպես, վոր-
պեսզի ամեն մի կոլտնտեսական, ցուցահանդեսի ա-
մեն մի այցելու կարողանա տեսնել վոչ միայն այդ
հաջողությունների արդյունքները, այլ և հատկապես
այն, թե զրանք ինչ ճանապարհով են նվաճված: Ֆու-
ցահանդեսի յուրաքանչյուր եքսպոնատ պետք է
դեկցվի մանրամասն բացատրություններով: Ֆուցա-
հանդեսում կազմակերպվելու յին բաղմաթիվ կոն-
սուլտացիաներ, վորտեղ կարելի յե ստանալ ամեն մի
խորհուրդ կամ տեղեկանք— գյուղատնտեսության
դժով: Հենց իրենք առաջադրանքները— ցուցահանդեսի
մասնակիցները այցելուներին կպատմեն, թե ինչպես
են իրենք նվաճել բարձր բերք, ինչպես են հասել ա-
նասնապահության բարձր միթերատվության:

Համամիութենական Գյուղատնտեսական Ֆուցա-
հանդեսը ակնառու և զբաղիչ դպրոց կլինի միլիոնա-

վոր մարդկանց համար: Յուցահանդեսը կոզնի մորեկի պահապանի յենթարկելու կոլտնտեսային լաջն մասնակցներին, գյուղատնտեսության մասնագետներին և զեկամարներին Ստալինյան յերրորդ հնգամյակի վիթխարի խնդիրների հաջող կատարման համար և կոլտնտեսային ու խորհրդային ամբողջ մասնային կհասցնի առաջավորների մակարդակին:

ՄԱՄՈՒԼԻ ՊԱՎԻԼՅՈՆԸ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍՈՒՄ

Համամիութենական Գյուղատնտեսական Յուցահանդեսի մյուս պավիլյոնների մեջ լինելու յե և մամուլի պավիլյոն: Նրա խնդիրն է— ցույց տալ, թե ինչպես է բուլչեփիկյան մտմունքն ոգնում միլիոնավոր կոլտնտեսականներին, խորհրդային ժողովուրդին և ՄՏԿ-ների բանվորներին, ամբարանել և զարգացնել սոցիալիստական գյուղատնտեսությունը: Պավիլյոնը ցույց կտա մամուլի հսկայական դերը սոցիալիստական մրցության ու ստախանովյան շարժման ծավալման դործում, ստախանովականների գյուղատնտեսության վարպետների փորձը բոլոր կոլտնտեսություններին, խորհրդային ժողովուրդին և ՄՏԿ-ներին հաղորդելու դործում:

Մամուլի պավիլյոնում լինելու յե չորս դահլիճ. 1) գլխավոր դահլիճ, 2) չրջանային և ստորին մամուլի դահլիճ 3) ցուցադրական տպարան, 4) դրախանութ:

Մամուլի պավիլյոնի գլխավոր դահլիճում հիմնական տեղը հատկացված է մարքսիզմ-լենինիզմի հիմնադիրներին և կլասիկներին: Այստեղ ցույց կտրվեն՝ «ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթացը», — Մարքս-Էնգելսի-Լենինի-Ստալինի աշխարհագրական և պատմական քարտեզները:

տությունները, ՀամԿ(բ)Կ 18-րդ համագումարում տրված ընկեր Ստալինի գեկուցման, ընկ. ընկ. Մոլոտովի, Ժդանովի և Մանուիլսկու գեկուցումների, ինչպես նաև համագումարի վարչականների հրատարակությունները վիթխարի տիրաժները:

Գլխավոր դահլիճի եկապոնատները այցելուներին ցույց կտան Լենինի ու Ստալինի մեծ դերը, վորպես բուլշևիկյան մամուլի կազմակերպիչներ և վոգեչնչողներ, բուլշևիկյան թերթերի (Լենինյան «Խեղա», «Վալերիո», «Բրձոլա», «Դրո», «Պրոլետարիյ», «Պրավդա») դերը մեր կուսակցության պատմության մեջ, Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխության նախապատրաստման և հաղթանակի, ԽՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցման համար մղված պայքարում:

Պավլոյնում բազմակողմանիորեն կլուսարանվի «Պրավդա»-յի աշխատանքը, վորպես որինակ, վորին պետք է հաջատարվի ամբողջ մամուլը:

Գլխավոր դահլիճի կենտրոնը հատկացված է համաշխարհային պատմական նշանակութուն ունեցող փաստաթղթերին— Ստալինյան Մահմանադրությանը և Գյուլատնտեսական արտելի կանոնադրությանը: Այստեղ ցույց կտրվի այն վիթխարի աշխատանքը, վոր կատարեց բուլշևիկյան մամուլը սահմանադրության նախադի և «ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրության մասին» կանոնադրության համաժողովրդական քննության ժամանակաշրջանում:

Գլխավոր դահլիճում մեծ տեղ է հատկացված Գյուլատնտեսական գրականությանը: Գլխավոր դահ-

լիճում պավլոյնի այցելուին կծանոթանա ԽՍՀՄ-ում լույս տեսնող Գյուլատնտեսական գրականության հետ, Գյուլատնտեսական գիտության այնպիսի նշանավոր ներկայացուցիչների յերկերի հետ ինչպիսիք են Տիմիշևիչը, Միչուրինը, Լիսենկոն, Վիլյամսը, Ֆիցինը, Դերժավինը: Մեզ մոտ բաց թողնվող Գյուլատնտեսական գրականության տիրաժ մեկ տասնամյակի ընթացքում, 1928-ից 1937 թ. հասավ վիթխարի թվի— 419 միլիոն որինակ:

Սոցիալիզմի բարերեր հողի վրա փարթամորեն բարդավաճեց խորհրդային գեղարվեստական գրականությունը: Մամուլի պավլոյնում իրենց տեղը կպտեն Խորհրդային սերված գրողները— Ա. Մ. Գորկու, Վ. Վ. Մայակովսկու, Ալեքսեյ Տոլստոյի, Մ. Շոլխովի, Ն. Ստրովսկու, Ժողովրդական յերդիչներ Սուլեյման Ստալսկու, Ջամբուլի և ուրիշ խոշորագույն գրողների և պոետների լավագույն հրատարակությունները: ԽՍՀՄ-ի հատուկ քարտեզի վրա ցույց կտրվի, թե մինչ հեղափոխությունը այժմյան յուրաքանչյուր միութենական հանրապետության տերիտորիայում ինչքան թերթ և այլ տպագիր հրատարակություններ եր լույս տեսնում և լույս է տեսնում հիմա: Այդ արտահայտիչ թվերում վառ ու ահնառու կերպով կյերեվա մեր սոցիալիստական յերկրի կուլտուրայի հզոր ծաղկումը:

Հատուկ դահլիճ է հատկացված առաջավոր շրջանային թերթերը, կուլտնտեսությունների, խորհտնտեսությունների, ՄՏԿ-ների պատի թերթերը ցույց տալու համար: Այստեղ ահնառու կերպով ցույց կտրվի,

Թե ինչպես է ստորին մամուլն ոգնում կոլտնտեսականներին ամրապնդելու կոլտնտեսությունները, ինչքան մեծ է նրա դերը սոցիալիստական մրցության և ստախանովյան շարժման ծավալման գործում, Թե մամուլն ինչպես է ոգնում գյուղական աշխատավորությանը պայքար մղելու ժողովրդի ստոր թնամիներին դեմ, ինչպես է մամուլը պայքարում ունեւոր և կոլտնտեսական կյանքի համար, ինչպես է նա ոգնում հասնելու տարեկան 8 միլիարդ փութ հացահատիկ արտադրելու մասին ընկ. Մտալինի լողունքի կատարմանը:

Պավլիյոնի այդ դահլիճում ցույց կտրվեն չընային այն լավագույն թերթերը և կոլտնտեսային, խորհտնտեսային ու ՄՏԿ-ների պատի թերթերը, վորոնք մեծ դեր խաղացին՝ կոլտնտեսությունների, խորհտնտեսությունների, մեքենատրակտորային կայանների, անասնաբուժական ֆերմաների— դրանց առաջավորների ու կազմակերպիչների կողմից Համամիութենական Գյուղատնտեսական Ցուցահանդեսին մասնակցելու իրավունք նվաճելու գործում:

Մեծ տեղ է տրվելու առաջավոր կոլտնտեսային պատի թերթերի ցուցադրմանը: Մամուլի պավլիյոնում կներկայացվեն ամենալավագույն պատի թերթերը: Այդ դահլիճի կենտրոնում կգտնվի մամուլի պավլիյոնի «պատվո գիրքը»: Այդ գրքում կգրվեն այն չընային թերթերը և կոլտնտեսային, խորհտնտեսային, ՄՏԿ-ների պատի թերթերն ու նրանց խմբագիրները, վորոնք իրավունք կնվաճեն ցուցահանդեսի մամուլի պավլիյոնում ներկայացվելու համար:

Մամուլի պավլիյոնում կներկայացվեն լավագույն կոլտնտեսային նկարիչների, կարիկատուրիստների, պատի թերթերի լավագույն ձեւավորողների աշխատանքները, ապակետիպ լուսական թերթերի, թռուցիկների— «կայծակների», յերգիծական և պատի թերթերի այլ հրատարակությունների նմուշները:

Նույն այդ դահլիճում ցույց կտրվի, Թե ինչպես է անցկացվում կոլտնտեսային և բրիգադային պատի թերթերի խմբագիրների մասսայական հեռակա ուսուցումը:

Այդ դահլիճի կենտրոնում, դահլիճ, վորը նվիրված է չընային և ստորին մամուլի ցուցադրմանը, պատվավոր տեղ կգրավի մարտական պատի թերթ «Ստալա»-ն, վորը հրատարակում էյին մեր քաջարի կարմիր մարտիկները խառն ընի չընայում տեղի ունեցած դեպքերի ժամանակ:

Մամուլի պավլիյոնի ցուցադրական տպարանում այցելուն կգտնի պոլիգրաֆ արտադրության բոլոր պրոցեսները, սկսած շարվածքից, վերջացրած տպագրման, ֆալցովիկայի (տպագրված էջի և թերթերի համապատասխան ձևով ծալելը) պրոցեսներով և տպագրված արտադրանքի կտրումը:

Մեծ ուշադրություն կգրավի ցուցադրական տպարանի կողքին դրված ընդհատակյա բուլեվարիկյան տպարանի պտուղ մակետը, տպարան, վորը ըստեղծվել է ընկեր Մտալինի առաջարկով 1904 թվին— Հավաքարում—Թբիլիսիի քաղաքի ծայրամասում:

Մամուլի պավլիյոնի գրքի խանութը կսպասարկի ցուցահանդեսի այցելուններին նորագույն գրականությամբ:

Մամուլի պալիլյոնի մուտքի վրա այցելուների ուղարկութունը կդրավի ամենօրյա ֆոտո թերթը: Նրանում կըստարանվեն ցուցահանդեսի բոլոր նորությունները, մեր յերկրի կյանքը և ամենակարեւորագույն իրադարձություններն արտասահմանում: Ֆոտո թերթի կողքին այցելուն կարող և ընթերցել պալիլյոնի տպարանում շարվող թերթը՝ ՏԱՍՍ-ի (Խորհրդային Միության հեռագրական գործակալություն) վերջին լուրերով: Դրված բիլլապարատի (ապարատ, վորը հեռադրով հաղորդում է նկարներ և լուսանկարներ) միջոցով կարելի կլինի տեսնել, թե ինչպես է կատարվում այդ հաղորդումը:

Պալիլյոնի շուրջը կա վերանդա— այստեղ այցելուն կարող է հանդստանալ, թերթ, ժուռնալ, գիրք կարդալ:

Ահա թե մոտավորապես ինչ պիտի ներկայացնի իրենից մամուլի պալիլյոնի Համամիութենական Գյուղատնտեսական Ցուցահանդեսում:


ԼԱՎԱԴՈՒՅՆ ՊԱՏԻ ԹԵՐԹԵՐԸ ՑՈՒՅՑ ԿՏՐՎԵՆ ՑՈՒՅԱՀԱՆԴԵՍՈՒՄ

Լավ, մարտական, գործոն պատի թերթը— մեծ ուժ է կոլտնտեսություններում արտադրական առաջադրանքների կատարման համար, կոլտնտեսությունների զարգացման և ամրապնդման համար մղվող պայքարում:

Շատ պատի թերթեր կոլտնտեսություններում, բերդադաներում կոլտնտեսային անասնաբուծական ֆերմաներում մեծ ոգնություն են ցույց տալիս գյուղատնտեսության առաջավորներին: Շատ պատի թերթեր ոգնու՞մ են նրանց պատվավոր տեղ նվաճելու ցուցահանդեսում: Այդ լավագույն պատի թերթերը կարող են ցույց տալ իրենց նվաճումները Համամիութենական Գյուղատնտեսական Ցուցահանդեսում:

Ի՞նչ պահանջներ են ներկայացնում պատի թերթին, ի՞նչպիսի պայմանների պետք է բավարարի այն, վորպեսզի սոցիալիստական գյուղատնտեսության հետագա վերելքի համար պայքարող առաջավոր մարտիկների թվում ցուցահանդեսի մամուլի պալիլյոնում տեղ ստանա:

Համամիութենական Գյուղատնտեսական Ցուցահանդեսին մամուլի պալիլյոնում ներկայացվելու ի—



րաժուճը կստանան այն լավագույն պատի թերթերը, վորոնց կոլտնտեսությունները, կամ ֆերմաները, կամ կոլտնտեսային առաջավորները իրենք այդ թերթերի ակտիվ մասնակցությամբ, ցուցահանդեսին մասնակցելու իրաժուճը կնվաճեն:

Ցուցադանդեսի մամուլը պաշխլյոնում ներկայացվելու իրաժուճը կստանա այն լավագույն պատի թերթը, վորն իսկապես հանդիսանում է մասսաների կազմակերպիչը կուսակցության 18-րդ համագումարի վորոշումների, ստալինյան յերրորդ հնգամյակի կատարման դործում: Լավագույն պատի թերթ կարող է համարվել այն թերթը, վորն ամենորայ պայքար է մղել կոլտնտեսություններում, խորհրտնտեսություններում, ՄՏԿ-ներում տնտեսական կուլտուրական շինարարության պլանների կատարման և դերակատարման համար, վորը դաստիարակում է կոլտնտեսականներին, խորհրտնտեսություններին, ՄՏԿ-ներին բանվորներին, խորհրդային հայրենասիրության, բոլշևիկյան զգաստության, սոցիալիստական աշխատանքային կարգապահության վորով, ազնիվ բարեխիղճ վերաբերմունք դեպի կոլտնտեսային դործը, դեպի հասարակական սեփականությունը ունենալու վորով:

Ցուցահանդեսին կներկայացվեն լավագույնները լավագույն այն պատի թերթերը, վորոնք ակտիվորեն, բոլշևիկարար ոգնում են սոցիալիստական մրցության հաջող ընթացքին, ստալինյան բերքի համար, անասնաբուծության և կոլիտզային տնտեսության ալլ բնագավառների ապրանքատվության բարձրացման համար մղվող պայքարում:

Սխառեմատիկորեն տալիս են մասսային ստանդակահանների և հարվածայինների վործը, բազմապատկում են նրանց շարքերը, ոգնում են կոլտնտեսություններին, խորհրտնտեսություններին, ՄՏԿ-ներին, նրանց առաջավորներին ու կազմակերպիչներին բոլշևիկորեն մտնել Ստալինյան յերրորդ հնգամյակի անվան համամիութենական սոցիալիստական մրցության մեջ, դերադանց աշխատանքով դաշտում այս տարի հասնել այնպիսի ցուցանիշների, վորոնք իրաժուճը տան մասնակցելու 1940 թ. դյուդատնտեսական ցուցահանդեսին:

Պայքարում են դյուդատնտեսական արտելի Ստալինյան կանոնադրությունն անշեղ կիրառելու համար, կանոնադրություն, վորը կոլտնտեսային կյանքի անխախտ որենքն է, հասնում են աշխատանքային կարգապահության հետագա ամրացման, ջրնադատում են կանոնադրությունը խախտողներին, պայքարում են մանր բուրժուական սովորություններին դեմ, վերադաստիարակում են հետամնաց մարդկանց, ոգնում են բոլոր կոլտնտեսականներին կանգնել առաջավորների-կոմունիզմի կառուցողների շարքերում, ակտիվ մասնակցություն են ցույց տալիս Համամիութենական Գյուդատնտեսական Ցուցահանդեսի նախապատրաստմանը, պայքարում են կոլտնտեսային դյուդի հետագա կուլտուրական ծաղկման համար:

Ցուցահանդեսին կարող են մասնակցել այն պատի թերթերը, վորոնք լույս են տեսնում վանոնավոր, պլանով, քաղաքականապես դրադեստ, լավ ձևավորված, վորոնք կառուցվում են կոլտնտեսային մասսայի ձեռքով, կոլտնտեսության լավագույն մարդկանց—

ստախանովականները, հարվածայինները, դյուղակա-
նետերիզենցիայի միջոցով, վորոնք ընդունակ են յու-
րաքանչյուր սկսած դործ հասցնել մինչև վերջ:

Ինչպես յերևում է վերևում ասածից, մամուլի
պալիկոնում մասնակցող պատի թերթերին ներկա-
յացվում են մեծ, բայց ամբողջովին իրադրոճելի պա-
հանջներ:

Յուրաքանչյուր կոլտնտեսության, նրա կուսակ-
ցական և կոմսոմոլի կազմակերպության, վարչու-
թյան, յուրաքանչյուր խմբադրի, խմբիկի ու դյուղ-
թղթակցի պատվի դործ է՝ ամեն կերպ պայքար մը-
ղել պատի թերթի աշխատանքը բարելավելու համար,
այդ աշխատանքը Համամիութենական Գյուղատնտե-
սական Ֆուցահանդեսի մամուլի պալիկոնի ներկա-
յացրած պահանջների մակարդակին հասցնելու հա-
մար:

Չպետք է լինի դյուղթղթակիցների աշխատի կո-
ւկտիով, վորը չձգտի մամուլի պալիկոնին մասնակ-
ցելու իրավունք նվաճել Համամիութենական Գյուղա-
տնտեսական ցուցահանդեսում: Չպետք է լինի աշա-
պիսի կոլտնտեսություն, վորը չկամենա մարտական
պատի թերթ ունենալ:

ԴԼԽԱՎԱՐ ԽՆԴԻՐԸ

Դրան հասնելու համար, պատի թերթերի միջև
պետք է լայն մրցություն ծավալել՝ ցուցահանդեսին
նախապատրաստվելու լողունգով: Ֆուցահանդեսում
ներկայացված լինել ցանկացող պատի թերթի գլխա-
վոր խնդիրն է՝ ողնել իր կոլտնտեսությանը խորհ-
մնտեսությունը, ՄՏԿ-ին, դյուղատնտեսության առա-
ջավորներին՝ արժանավոր կերպով պատրաստվելու
ցուցահանդեսին հասնելու արտադրական աշխատի
ցուցանիշների, վորոնք հնարավորություն տան նրան
ցուցահանդեսում առաջին տեղը զբաղելու:

Այդպիսի ցուցանիշներ է տվել Համամիութենա-
կան Գյուղատնտեսական Ֆուցահանդեսի Գլխավոր կո-
միտեն՝ «Համամիութենական Գյուղատնտեսական Ֆու-
ցահանդեսի մասնակիցների մասին» 1939 թ. փետրե-
վարի 16-ի իր վորոշման մեջ: Դրանք մշակվել են
յուրաքանչյուր կուլտուրայի և դյուղատնտեսության
յուրքանչյուր ճյուղի համար առանձին, հաշվի առնե-
լով Խորհրդային Միության հանրապետությունների,
յերկրամասերի ու մարզերի տեղական առանձնահատ-
կությունները:

Այդ ցուցանիշներն ունեն շատ կարևոր նշանակու-
թյուն: Դրանց մասին ասաց Խորհրդային կառավա-
րության գլուխ ընկ. Մոլոտովը՝ կուսակցության
18-րդ համագումարում ԽՍՀՄ-ի Ժողովրդական տըն-

տեսութեան զարգացման յերրորդ հնգամյա պլանի մասին տված իր գեկուցման մեջ:

Ընկ. Մոլոտովը ընդգծեց, վեր ցուցահանդեսը պետք է խաղա խոշոր գեր՝ գյուղատնտեսութեան հետադա վերելքի կադմակերպման և յերրորդ հնգամյակի առաջադրանքները կատարման գործում: Իսկ ՀամԿ(բ)Կ 18-րդ համագումարի կողմից յերրորդ հնգամյակում գյուղատնտեսութեան առաջ գրված խնդիրները մեծ են ու պատասխանատու:

Յերրորդ հնգամյակի տարիներին անհրաժեշտ է հասնել 8 միլիարդ փութ հացահատիկի արտադրութեան, ապահովելով հեկտարից 12—13 ցենտներ հացահատիկի միջին բերք: Տեխնիկական կուլտուրաների բամբակի, շաքարի ճակնդեղի, վուշի, կանեփի և այլ գծով բարձրացնել արտադրանքը միջին հաշվով 30—35 տոկոսով:

Անասնապահութեան դժով — 2 անգամ ավելացնել վոշխարների և խոզերի գլխաքանակը, 40 տոկոսով՝ խոշոր յեղջուրավոր անասուններինը և 35 տոկոսով՝ ձիերինը:

Յերրորդ հնգամյակի առաջադրանքները պետք է անպայման կատարվեն ու դերակատարվեն: Դրան յերաչխիք է մեր կուսակցութեան բոլջիկյան, ստալինյան ղեկավարութեանը:

Կոմունիստական կուսակցութեան և նրա առաջնորդ ընկեր Ստալինի ղեկավարութեամբ ԽՍՀՄ-ում հաջողութեամբ իրականացված են առաջին և յերկրորդ հնգամյակները, հիմնականում կառուցված է սոցիալիստական հասարակարդը: Կատարելով յերրորդ հնգամյակի պլանը, մենք հսկայական քայլ կա-

նենք դեպի առաջ՝ ԽՍՀՄ հիմնական տնտեսական խնդիրը լուծելու ուղղութեամբ, այն է՝ հասնել Յեկրոպայի տնտեսական տեսակետից ամենազարգացած կապիտալիստական յերկրներին և Ամերիկայի Միացյալ Նահանգներին ու անցնել նրանցից:

Ցուցահանդեսի մասնակիցները — կուլտնտեսութեան ներք, խորհտնտեսութեանները, ՄՏԿ-ները, կուլտնտեսային անասնաբուժական և ցեղական ֆերմաները — ընտրվում են ըստ իրենց յերկու տարվա — 1937 և 1938 թ. թ. աշխատանքի արդյունքների: Սոցիալիստական գյուղատնտեսութեան առաջադրանքը և կադմակերպիչները թույլ կտրվեն ցուցահանդեսին ըստ իրենց վերջին տարվա — 1938 թվի կատարած աշխատանքի արդյունքների: Ուրեմն, այս կուլտնտեսական յերկրներին, խորհտնտեսութեանների, ՄՏԿ-ների լաթվադոյն թերթերը ևս կարող են ցուցահանդեսին մասնակցել ըստ իրենց 1937—1938 թվերի ընթացքում կատարած աշխատանքի:

Հարց է առաջ գալիս, իսկ ինչպես վերաբերվել այն պատի թերթերի խմբիչներին հետ, վորոնք անցյալ տարիներում և իրենք բավականաչափ լավ չեն աշխատել և այն կուլտնտեսութեանները, վորտեղ հրատարակվում են այդ թերթերը, չեն հասել այնպիսի ցուցանիշների, վոր իրավունք տար նրանց մասնակցելու ցուցահանդեսին:

Այդ հարցի պատասխանը տալիս է ԽՍՀՄ Ժողկոմիտեի և ՀամԿ(բ)Կ կենտկոմի 1939 թ. փետրվարի 17-ի «Համամիութենական Գյուղատնտեսական Ցուցահանդեսի մասին» վորոշումը:

Վորոշման մեջ ասվում է.

«Նպատակահարմար դանել, վորպեսզի այս տարի
քացվող Համամիութենական Գյուղատնտեսական
Ցուցահանդեսը շարունակի իր աշխատանքը նաև 1940
թվին:

Համամիութենական Գյուղատնտեսական Ցուցա-
հանդեսին 1940 թվին պետք է ներկայացվեն այն կոլ-
տնտեսությունները, խորհանտեսությունները, մեքե-
նա-տրակտորային կայանները, կոլտնտեսային ու
խորհանտեսային ցեղաբուծական Ֆերմաները, սելեկ-
ցիոն ու վորձազրիտական կայանները, գիտա-հետա-
գիտական հիմնարկները, վորոնք յերեք տարվա—
1937, 1938 և 1939 թ. թ. իրենց աշխատանքի արդ-
յունքներով հասել են Համամիութենական Գյուղա-
տնտեսական Ցուցահանդեսին մասնակցելու համար
սահմանված ցուցանիշներին, ինչպես նաև գյուղա-
տնտեսությունների այն կազմակերպիչներն ու առաջավոր-
ները, վորոնք յերկու տարվա— 1938 և 1939 թ. թ.
իրենց աշխատանքի արդյունքներով հասել են համա-
պատասխան ցուցանիշներին»:

Կառավարության և կուսակցության այդ վորո-
շումը վորը ցուցահանդեսը յերկարաձգում է մինչև
1940 թվի, լայն հնարավորություններ է ստեղծում
բոլորի համար, ով ուզում է արժանանալ պատվավոր
իրավունքի՝ ցույց տալ իր նվաճումները սոցիալիս-
տական գյուղատնտեսության վերելքի գործում: Այն
կոլտնտեսությունները, խորհանտեսությունները,
ՄՏԿ-ները, սոցիալիստական հողագործության և ա-
նանարբուծության առաջավորները, վորոնք այդ իրա-
վունքին դեռ չեն հասել, ունեն լրիվ հնարավորու-

թյուն նվաճել այն իրենց որինակելի աշխատանքով
1939 թ.:

Նույնը ամբողջովին վերաբերվում է նաև պատի
թերթերին: Ուղղելով իրենց անցյալ թերությունները,
պատի թերթը իսկական բուլչիկյան ագիտատոր,
պրոպագանդիստ և մասսաների կազմակերպիչ դարձ-
նելով, վորը անդադրում պայքարում է կոլտնտեսու-
թյան ամրապնդման համար, խմբելով կարող է Հա-
մամիութենական Գյուղատնտեսական Ցուցահանդեսի
մամուլի պալիյոնում մասնակցելու իրավունք նվա-
ճել:

ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍԻՆ ՆԱԽԱՊԱՏ- ՐԱՍՏՎԵԼԸ

Պատի թերթի և նրա գյուղթղթակիցների կարե-
վորագույն խնդիրն է՝ ամենուրյա ողնություն ցույց
տալ իր կոլտնտեսութեանը, ղեկավարներին ու ստա-
խանովականներին, կոլտնտեսութեան առաջավորներին
հասնելու 1939 թ. արտադրական աշխարհի ցուցանիշ-
ների, վորոնք թույլ տան նրանց դառնալ ցուցահան-
դեսի մասնակիցներ:

Սկսել հարկավոր է անհաղաղ: Այժմ՝ դար-
նանացանի յետուն, պատասխանատու չըջանն է: Մեր
յերկրի հարավային չըջաններում արդեն սկսում են
ցանքի աշխատանքները: Որը-որի վրա մասսայական
ցանքի մեջ են մտնում նորանոր չըջաններ: 1939 թվի
բարձր բերքի համար մղվող պայքարի հաջողութունն
առաջին հերթին վորոշվում է դարնանացանով:

Հողում խոնավութուն պահպանելու համար մղվ-
վող պայքարը կոլտնտեսութունների, խորհրդատեսու-
թյունների և ՄՏԿ-ների գլխավորապես խնդիրն է:
Անհրաժեշտ է ոգտադործել յուրաքանչյուր ժամը, յուրա-
քանչյուր րոպեն, վորպեսզի դարնանացանը կատարվի
ամենատեղմ ժամկետներում, բաց չթողնել վոչ մի
թանգավին կաթիլ խոնավութուն, լայնորեն կիրառել
աշնանավարի կուլտիվացիան, կատարել սերմերի յա-
րովիզացիայի պլանը, ցանել բացառապես բարձրորակ
լավացրած տեսակավոր սերմով: Դա յուրաքանչյուր
կոլտնտեսությունում աշխատանքի մարտական ծրա-
դիր է:

Բուհեիկորեն պայքարել այդ ծրագրի կատարման
համար, գյուղթղթակցի սուր աչքով ստուգել թե

կոլտնտեսութեան մեջ ամեն ինչ պատրաստ է՝ արդյոք
դարնան համար, մորիլիզացիայի յենթարկել կոլտն-
տեսային մաստաներին ցանքը հաջողութեամբ կատա-
րելու, անողք քննադատութեան յենթարկել բոլոր
թերությունները, ողնել վերացնելու արգելակները,
վորոնք խանգարում են դործի հաջողութեանը՝ ահա
թե ինչ է պահանջվում այն պատի թերթից, վորը
իրապես կապվել է Համամիութենական Գյուղատնտե-
սական Ցուցահանդեսին նախապատրաստվելու դոր-
ծին:

Ամբողջ տարվա ընթացքում պատի թերթը պետք
է չթուլացող հասարակական կոնտրոլի տակ պահել
գյուղատնտեսական աշխատանքի ամբողջ ընթացքը,
աշնանացան և դարնանացան ցանքերի խնամքը, քաղ-
հանը, գյուղատնտեսական վնասատուների դեմ մղվող
պայքարը, բերքահավաքը:

Թող յուրաքանչյուր պատի թերթի խմբից, թող
գյուղթղթակիցները հիշեն իրենք և անդադար հիշեց-
նեն կոլտնտեսականներին, վոր բարձր բերքի համար
պայքարի հաղթանակը, ցուցահանդեսին մասնակցելու
համար անհրաժեշտ ցուցանիշներ ձեռք բերելը կախ-
ված է աղբոտեխնիկայի կանոնների ճիշտ կիրառումից
և աշխատանքները լավ կադակերպումից:

Հաղթանակի բանալին մեզ մոտ ամեն տեղ, աշ-
խատանքի ցանկացած տեղամասում, հանդիսանում է
սոցիալիստական մրցութեան և ստախանովյան շարժ-
ման լայն ծավալումը: Ցուցահանդեսին նախապատ-
րաստվելու դործում այդ խնդիրը առանձնապես կա-
րեւոր է:

ԽՍՀՄ Ժողկոմխորհը և ՀամԿ(բ)Կ Կենտկոմը

քենց «Համամիութենական Գյուղատնտեսական Ֆու-
ցաճանդեսի մասին» վորոշման մեջ կոչ են անում
կոլտնտեսականներին, խորհանտեսություններին և
ՄՏԿ-ներին աշխատողներին, գյուղատնտեսության
մասնագետներին ու գիտական աշխատողներին 1939
թվին լաշնորեն ծափալել սոցիալիստական մրցությու-
նը՝ իրենց նվաճումները ցուցաճանդես հանելու իրա-
վունքի համար:

Կուսակցության 18-րդ համագումարից հետո ամ-
բողջ յերկրում, Մոսկվայի և «Կրասնիյ պրոլետարիյ»
դործարանի կոլեկտիվի նախաձեռնությամբ ծափա-
լում է ստալինյան յերրորդ հնգամյակի անվան հա-
մամիութենական մրցությունը: Յուրաքանչյուր պա-
տի թերթի և գյուղթղթակցի առաջնահերթ խնդիրն
է՝ ներգրավել այդ մրցության մեջ կոլտնտեսու-
թյուններին, խորհանտեսություններին, ՄՏԿ-ներին:
Համամիութենական Գյուղատնտեսական Ֆուցաճանդե-
սին մասնակցելու իրավունք ձեռք բերելու համար
մրցությունը, ստալինյան յերրորդ հնգամյակի անվան
համամիութենական մրցության անբաժանելի մասն է:
Սոցիալիստական մրցությունը յուրաքանչյուր կոլ-
տնտեսությունում և կոլտնտեսությունների, խորհ-
անտեսությունների, ՄՏԿ-ներին միջև հնարավորու-
թյուն կտա տասնյակ հազարավոր նոր կոլտնտեսու-
թյունների, խորհանտեսությունների, ՄՏԿ-ներին,
գյուղատնտեսության առաջավորների ու կազմակեր-
պիչների այս տարվա դերազանց աշխատանքով՝ ի-
րավունք նվաճել ցուցաճանդեսին մասնակցելու, վորը
ինչպես հայտնի յե կշարունակվի և 1940 թ.:

Այն պատի թերթը, վորը ցանկանում է մասնակ-

ցել ցուցաճանդեսին, պետք է հանդես դա վորպես
ստալինյան յերրորդ հնգամյակի անվան մրցության
հրահրող: Մրցության նպատակն է ապահովել յուրա-
քանչյուր կոլտնտեսականի աշխատանքի արտադրու-
կանության բարձրացումը, դաշտում այս տարվա դե-
րադանց աշխատանքով հասնել այնպիսի ցուցանիշնե-
րի, վորոնք իրավունք կտան մասնակցելու ցուցաճան-
դեսին:

Ֆուցաճանդեսային կոմիտեյի կողմից մշակված և
ԽՍՀՄ Ժողկոմխորհի ու ՀամԿ(բ)Կ Կենտկոմի կողմից
հաստատված ցուցաճանդեսին մասնակցելու իրավուն-
քի ցուցանիշները՝ յուրաքանչյուր պատի թերթի,
ինչպես նաև յուրաքանչյուր կոլտնտեսության ու
կոլտնտեսականի տալիս են ստալինյան յերրորդ հն-
գամյակի անվան կոլտնտեսությունների, խորհանտե-
սությունների, ՄՏԿ-ներին համամիութենական սոցիա-
լիստական մրցության կոնկրետ և պարզ ծրագիրը:

Պատի թերթի յուրաքանչյուր համարում մրցությու-
նը և ցույց տալ, թե ինչպես է անցնում մրցությու-
նը, ով է դնում առաջին շարքում, ով է հետ մնում:

Յեվ այդպես մեծ նշանակություն ունի առաջա-
վոր ստախանովյան վործի լավ, խոր ցուցադրումը
պատի թերթում: Պետք է բացահայտել ստախանովա-
կանների «գաղտնիքը» ցույց տալով, վոր առանձնա-
պես, այստեղ վոչ մի գաղտնիք չկա, վոր ամբողջ
դործը կախված է միայն ստեղծագործ գիտակցական,
սոցիալիստական վերաբերմունքից դեպի աշխատան-
քը: Յուրաքանչյուր կոլտնտեսական կարող է դառնալ
ստախանովական: Դրա համար նրան հարկավոր է
լիապես տիրապետել իր աշխատանքի տեխնիկային և
բարեխիղճ ու մտածված վերաբերվել աշխատանքին:

ԱՌԱՋԱԿՈՐ ԹԵՐԹԻ ՓՈՐՉԸ

Մենք ուզում ենք խմբագրներին, դպրագրգրատ-
կիցներին ծանոթացնել «Պոբեդա տրուդա» կոլտնտե-
սության (Սաստիսկի շրջան, Ռյադանի մարզ) առա-
ջավոր պատի թերթ («Ձա Ուրաթայ»-ի) աշխատանքի.
Փորձի հետ, վորը Համամիութենական Գյուղատնտե-
սական ցուցահանդեսի մասնակիցի թեկնածու յե:
Այդ կոլտնտեսությունը ղեկ 1935 թվին անտեսական
հաջողությունների համար բարձրագլեց մարզային
պատվո տախտակի վրա: Դրանից հետո նա տարեց
տարի ձեռք է բերում նորանոր հաղթանակներ:
«Ձա ուրաթայ» տարա Եր.

«2ա ուրաժայ» պատի- թերթը համար համարի հետեւից զետեղում եր մանրամասն տեղեկություններ հարվածայինների մրցության, առաջավորների աշխատանքի մասին: Թերթը սխտեմատիկաբար պայքարում է փոքրագույն բոլոր կոլտնտեսականները տիրապետեն աշխատանքի ստախանովյան մեթոդներին, սպորտեխնիկական ուսման ծավալման, ագրոտեխնիկան կոլտնտեսային, առաջավոր տացնելու համար: Պատի թերթի նախաձեռնությամբ կոլտնտեսությունում կազմակերպվեց խրճիթ-լարդրատորիա:

1936 թ. Կոլտնտեսությունում շարժում ծավալվեց հանուն ամբողջ մասսիվի վրա բերքատվության բերելը: Սոցիալիստական արդյունաբերության շարժման առաջավորներն էին դյուղերից Մ. Կ. Ժուլինյան, Մ. Ի. Դենիսովան, Ա. Ն. Լապտան և ուրիշները: Ստախանովականների ամենորոյա հաղորդումը պատի թերթում ողնեց առաջ

մղել հետ մնացողներին :

Պատի թերթի և դուրբիլթիթակցական ակտիվի-
զործոն մասնակցությամբ նպաստավոր հող պատրաստ-
վեց կոլտնտեսության մեջ մասսայական ստախանով-
յան աշխատանքի անցնելու համար։ 1937 թ. կոլտնոե-
սությունում հաշվվում էր արդեն 19 ստախանովական
ռղակ։ Նրանք հասան մեծ արդյունքների։ Ընկեր-
ները Խրուլկովայի, Դենիսովայի, Ժուլինայի և Յա-
կունինայի ողակները հեկտարից ստացան 400 ցենտ-
ներ չափարի ճակնդեղի բերք։ Նյուրա Դավիդովայի
ողակը հեկտարից հավաքեց 32,5 ցենտներ զարման
ցորենի բերք։ Սավինայի բրիգադը յուրաքանչյուր
հեկտարից ստացավ 704 ցենտներ կաղամբ։

«9» ուրաժայ»

Պատրաստվելով ցուցահանդեսին, «Հայկական հեղափոխության թերթը» մեծ աշխատանք կատարեց։ Նա չբացարձակությամբ մեծ աշխատանք կատարեց։ Նա չբացարձակությամբ մեծ աշխատանք կատարեց։

Սաղայն խմբիկը չհանդստացավ Ղրանով: Պատրիսերթի եջերում յերեվացին ստախանովականների լեզվաները, թե ինչպես են ձեռք բերում նրանք բարձր բերք:

Ահա, որինակ, լեկցիաներից մեկը, վորը հրատարակվել է այդ պատի թերթում: Նրանում խոսվում է նյութա Դավիդովայի առաջավոր ողակի աշխատանքի փորձի մասին:—

«1937 թ. իմ ողակի մասնակիցները ծանոթացան կոլտնտեսական փորձագետ, խրճիթ—լաբորատորիայի վարիչ ընկեր Զակոլյուկինի հետ: Նա հրավիրեց մեզ իր մոտ լաբորատորիա և պատմեց իր աշխատանքի մասին:

Ընկեր Զակոլյուկինը գյուղատնտեսության նվաճումների մասին հետաքրքիր հոգվածներ կարգաց մեր թերթերից և ժուռնալներից: Մենք հատկապես սիրում էինք լսել նրա պատմածները կոլտնտեսական—ստախանովականների մասին, վորոնք ռեկորդային բերք էին ստացել:

Ցանկություն առաջացավ, վոր մենք ել փորձենք ցորենի բարձր բերք ստանալ:

Աչնանը կոլտնտեսության վարչությունը ողակի համար առանձնացրեց յերկու հեկտար հողամաս: Յեւ աչնանից մենք սկսեցինք նախապատրաստվել բարձր բերք ստանալու համար:

Յուրաքանչյուր հեկտարի համար տեղափոխեցինք հինգ տոննա աղբ, ցրեցինք այն, վարեցինք 18 սանտիմետր խորությամբ:

Զմեռը մենք բարձրացրինք մեր ագրոտեխնիկական գիտելիքների մակարդակը: Գնացինք խրճիթ—լաբորատորիա ընկ. Զակոլյուկինի մոտ: Նա ոգնեց մեզ ուսումնասիրել ակադեմիկ Կելլերի «Բույսերի կյանքը» գիրքը, հացահատիկային կուլտուրաների ագրոտեխնիկան, սերմերի յարովիզացիայի և պահպանման

մասին գրքեր:

Յերկու անգամ մեր հողամասում անցկացրինք ձնապահպանում: Հողամասում մեկ մետր հաստությամբ ձյուն կուտակվեց: Գարնանը յերկար ժամանակ չեր հալվում հողամասի ձյունը: Մենք անհանգիստացանք. կոլտնտեսականները սկսեցին հերկել դառնանացան ցորենի հողամասը, իսկ մեր հողամասում ձյունը դեռ մնում է: Բայց ընկ. Զակոլյուկինը բացատրեց մեզ, վոր մեր ցորենը հետ չի մնա:

Վերջապես մենք ցանեցինք մեր հողամասում «Լյուտեսցենս» սորտի ցորեն: Մեր ցուցումով հողն ուղեղի խորը վարեցին: Մենք հետևեցինք նաև ցանքի ճշտությանը, վորպեսզի ամեն ինչ լինի գիտականորեն:

Ցանքից առաջ մենք մաքրեցինք սերմերը մոլախոտերի սերմերից, ախտահանեցինք մրիկից:

Ցորենը ծլեց համաչափորեն: Հողամասում յերկու վացին մոլոխոտեր: Մենք մի քանի անգամ քաղհանեցինք հողամասը, վորպեսզի վոչ մի մոլոխոտ չմնա: Կատարեցինք հողի շարովիման:

Տեղ տեղ յերեվան յեկան չցանված տեղերը: Վերցրեցինք յերեք կիլոգրամ սերմ ու ցանեցինք փոցխումով: Կատարեցինք ցորենի լրացուցիչ սնուցում: Լրացուցիչ սնուցման համար պատրաստեցինք յերկու ցենտներ ամոնյակային բորակ, չաղ տվեցինք յերկու ցենտներ սուպերֆոսֆատ և մեկ ցենտներ կալիական աղ: Ագրոնոմի խորհրդով կատարում էինք մակերեվոլյութային սնուցում, ձեռքով չաղ էյինք տալիս պարարտանյութը:

Յերկու ուր կտրեցինք մրիկը: Մեր ցորենը հա-

ուսնացաւ աշնանացան ցորենի հետ միասին: Յերբ մենք հնձեցինք ու կալսեցինք,— տեսանք, վոր մեր աշխատանքն իդուր չի կորել. յուրաքանչյուր հեկտարը տվեց մաքուր տեսակավոր հացահատիկի լավ բերք»:

Այդ լեկցիան արտատպւեց շրջանային թերթի կողմից: Նյուրա Դավիդովայի, նրա հրաշալի աշխատանքի մասին խոսեց ամբողջ շրջանը, իսկ հետո և մարզը: Այժմ Դավիդովայի ողակը Համաթիութենական Գյուղատնտեսական Ֆուգահանդեսի թեկնածու յե հաստատված:

«Ձա ուրաժայ» պատի թերթը նման մի քանի լեկցիաներ ե տեղավորել: Դրանք բոլորը հետո արտատպւեցին շրջանային թերթում: Այդպես «Պոբեդա տրուդա» կոլտնտեսութան ստախանովականների աշխատանքի փորձը վերցվեց ամբողջ շրջանի կոլտնտեսականների և կոլտնտեսուհիների կողմից:

Պատի թերթում այդ լեկցիաները տրվում են կրճատ ձևով: Բայց թերթի հրատարակումից անմիջապես հետո խմբովը կազմակերպւում ե նույն այդ ստախանովականների մանրամասն լեկցիաները կոլտնտեսային լայն ժողովներում:

Այդպիսի զանազան ճանապարհներով և ձևերով գյուղատնտեսութան վարպետների ամենաարժեքավոր փորձը արժատանույթ ե կոլտնտեսային մասսաների մեջ, նրանց պաշարել հանելով բարձր և կայուն բերքի համար:

Գյուղատնտեսական արտելի կանոնադրութան կատարումը վճռական նշանակութիւն ունի կոլտնտեսութիւնների ամբապնդման, նրանց տնտեսական հզո-

քութիւն աճման և կոլտնտեսականների ունեւորութիւն վերելքի համար: Կոլտնտեսային կանոնադրութիւնը— անխախտ որենք ե, նրա խախտումը ողուտ կրերի միայն խորթ, վնասարարական տարրերին, վորոնք ձգտում են թուլացնել կոլտնտեսային կարգերի հզորութիւնը:

«Ձա ուրաժայ» պատի թերթը համառորեն պայքարեց Գյուղատնտեսական արտելի կանոնադրութան անհեղ կատարման համար: Թերթը կանոնադրութան անհեղ կատարման համար զեպքերում արագ կերպով աշատղավադման բոլոր զեպքերում արագ կերպով աշատղանդույթ եր և հասալ այն բանին, վորպեսպի ձեռք առնվեան համապատասխան միջոցներ: Թերթն անողորմաբար մերկացնում եր կոլտնտեսային սեփականութիւնը թալանողներին, գոփողներին, աշխատանքային կարգապահութիւնը չարամտորեն խախտողներին:

«Ձա ուրաժայ» թերթը մեծ ուշադրութիւն եր նվիրում ցուցահանդեսի համար պատրաստված եքսպոնատների պահպանմանը: Պատի թերթի առաջարկով ընտրված եքսպոնատները հանձնվեցին խրճիթլաբորատորիային: Դրանք այնտեղ խնամքով պահվում են մինչև այժմ:

Պատի թերթը պայքարում ե վոչ միայն կոլտնտեսութան արտադրական հաջողութիւնների համար: Նա մեծ աշխատանք ե կատարում կուլտուրական ֆրոնտում: Թերթի պայքարը հանուն գյուղի կուլտուրական փողոցի, մաքրութիւն ու կոկիկութիւն կենդանում, տվեց լավ արդիւնք: «Ձա ուրաժայ» պատի թերթը զիմեց բոլոր կոլտնտեսականներին և գյուղական ինտելեկտուալային, առաջարկութիւն անելով կոկեկտիվ կերպով գրել իրենց գյուղի պատմութիւն

նը: Այդ դրքում ցույց կտրվի, թե ինչպես անցյալում աղքատ և խեղճ Մոկոբոյե գյուղը դարձավ առաջա-վոր, ծաղկուն, սոցիալիստական կոլտնտեսային գյուղ: Թերթն այդ ամենն անում է Համամիութենա-կան Գյուղատնտեսական Ֆուցահանդեսում կոլտնտե-սության բազմակողմանի ծավալուն ցուցադրումը նա-խապատրաստելու գործով:

«Զա ուրաժայ» թերթի որինակը ակնառու կեր-պով ցույց է տալիս, թե յուրաքանչյուր կոլտնտեսա-յին պատի թերթ ինչպիսի բազմազան, ոգտակար աշ-խատանք կարող է ծավալել Համամիութենական Գյու-ղատնտեսական Ֆուցահանդեսին նախապատրաստվելու գործում, թե պատի թերթն ինչպիսի մեծ ոգնություն կարող է ցույց տալ իր կոլտնտեսությանը՝ ցուցահան-դեսին մասնակցելու իրավունք նվաճելու գործում: Բանը միայն իրեն՝ խմբելու և գյուղթղթակիցների նախաձեռնության մեջ է:

ԼԱՅՆ ԽԱՎԱԼԵՆՔ ՊԱՏԻ ԹԵՐ- ԹԵՐԻ ՄՐՑՈՒԹՅՈՒՆԸ

Պատի թերթերի նախապատրաստումը ցուցահան-դեսին լավագույն արդյունք կտա, միայն այն դեպ-քում յեթե այն անցնի լայն ծավալած մրցության հիման վրա:

Համամիութենական Գյուղատնտեսական Ֆուցա-հանդեսի նախապատրաստման զեռով վորպես մասնույթ մրցության նախաձեռնողներ հանդես յեկան Ռյա-դանի մարզի չրջանային և պատի թերթերի խմբագիր-ների խորհրդակցության մասնակիցները: Նրանք պարտավորվեցին պատմել կոլտնտեսականներին ԽՍՀՄ Ժողկոմխորհի և ՀամԿ(բ)Կ կենտկոմի ցուցահանդեսի առթիվ վորոշման մեծ կարեվորության մասին:

Նրանք պարտավորվեցին ոգնել կոլտնտեսու-թյուններին ծավալել սոցիալիստական մրցությունը 1939 թվի բոլոր գյուղատնտեսական աշխատանքնե-րում ցուցահանդեսում իրենց նվաճումները ցույց տալու իրավունքի համար, ամեն որ լուսաբանել թեր-թերում ցուցահանդեսի մասնակցող թեկնածուների փորձը, նրանց աշխատանքը հասարակության առանձ-նակի հսկողության տակ վերցնել, ոգնելով նրանց հաջողությունների ամբապնդման ու հետագա աճին:

Ռյադանի մարզի թերթերի խմբագիրների խոր-

հրդակցությունն իր վորոշման մեջ կոչ արեց մամուլի բոլոր աշխատողներին, աշխատել այնպես, վորպէսզէն Համամիութենական Գյուղատնտեսական Յուշահանդեսի նախապատրաստման շնորհիվ մարզի բոլոր կոլտնտեսությունները, խորհրդատեսությունները, ՄՏԿ-ները գերակատարեն ցուցահանդեսին մասնակցողների համար սահմանված ցուցանիշները: Ույշահանդեսները մրցման կանչեցին Տուլայի մարզի շրջանային և պատի թերթերի խմբագիրներին և գյուղթղթակիցներին:

Մեր յերկրի բոլոր կոլտնտեսային պատի թերթերի խմբագիրները պետք է արձագանքեն այդ մեծարժեք նախաձեռնությանը: Թող հարեվան կոլտնտեսությունները գյուղթղթակիցները մեկը մյուսին մրցության կանչին լավագույն պատի թերթերի թողարկման համար:

Շրջանային թերթերի խմբագիրն է՝ խմբագիրներին ու գյուղթղթակիցներին ոգնել ծախելու պատի թերթերի մրցությունը: Շրջանային մամուլի եջերում պետք է գետեղել նյութեր՝ այդ մրցության ընթացքի մասին, մրցակցող թերթերի տեսություններ, ցույց տալ առաջավոր պատի թերթերը: Թող ավելի լայնորեն ծախվի ստորին մամուլի մրցությունը, Համամիութենական Գյուղատնտեսական Յուշահանդեսի նախապատրաստման շուրջը: Այն կհանդիսանա մի հզոր գործոն ուժ, վորը կօգնի թերթի աշխատանքը նոր բարձրության հասցնելու: Մրցությունը կօգնի բարելավելու մեր մամուլի աշխատանքը, վորը կօգնի և հզոր գեների դեր կատարելու այն պայքարի մեջ, վորը մղվում է ստալինյան յերրորդ հնգամյակի անվան

մեծաքանչ խնդիրների հաղթականորեն իրականացման համար, վորոնք առաջադրվել են Լենին-Ստալինի կուսակցության 18-րդ համագումարի կողմից:

«Ռաբոչե-կրեստյանսկիյ կորրեսպոնդենտ» ժուռնալը լայնորեն լուսաբանելու յե ցուցահանդեսին նախապատրաստվելու առթիվ պատի թերթերի մրցության ծախվումն ու ընթացքը: Հարկավոր է միայն, վորպէսզէն խմբագիրներն ու գյուղթղթակիցներն այս մասին նյութեր ուղարկեն ժուռնալին:

Այն պատի թերթերը, վորոնք գրանցվել են վորպէս Համամիութենական Գյուղատնտեսական Յուշահանդեսին մասնակցելու թեկնածուներ, պետք է ցուցահանդեսի մամուլի պալիլյոնի համար պատրաստեն հետեյալ ահնրաժեշտ նյութերը՝

Պատի թերթերի թողարկված համարները: Մանրամասն նկարագրում են խմբագրի և գյուղթղթակիցների աշխատանքի փորձը՝

Թերթի խմբագրի անդամների, ակտիվի և գյուղթղթակիցների ցուցակներ՝ դրանցից յուրաքանչյուրի աշխատանքի նկարագրությամբ, լավագույն նկարներ, պատկերներ, ծաղրանկարներ, վտանաավորներ, քառյակներ, կոլտնտեսականների զնահատականներ՝ իրենց պատի թերթի մասին, թե պատի թերթն ինչպես է իրենց ոգնում կոլտնտեսության հետագա ամրապնդման համար, բարձր և կայուն բերքի հասնելու համար, անասնապահության մթերատուության և կոլեկտիվ տնտեսության բոլոր ճյուղերի աճման համար մղած պայքարում:

Մեր ամբողջ յերկիրը մայիսի 5-ին կնշի բողոքական մամուլի տոնը: Այդ նշանավոր օրը, 27 տարի առաջ, 1912 թվին լույս տեսավ Լենինյան-Ստալինյան «Պրավդա»-յի առաջին համարը: «Պրավդա» թերթը հակապական դեր խաղաց մեր կուսակցության ամբողջ ման, Հոկտեմբերյան Սոցիալիստական հեղափոխության նախապատրաստման գործում, ԽՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցման համար պայքարում:

Յուրաքանչյուր տարի մամուլի օրը մեր բոլոր թերթերը, ժուռնալները, հրատարակչությունները ամփոփում են իրենց աշխատանքի արդյունքները: Հայացք ձգելով իրենց անցած ուղու վրա, նրանք իրենց ընթերցողների հետ նշում են իրենց հաջողությունները՝ ձեռք բերված կուսակցական կազմակերպությունների ղեկավարությամբ, նույնպես և թերությունները, վրոնք պետք է ուղղել: Մամուլի օրը անց է կացվում ինքնաքննադատության նշանաբանի տակ, վորը ոգնում է լավացնել թերթերի, ժուռնալների աշխատանքը, հասցնել այն ել ավելի բարձր ստորիճանի:

Այս տարի մամուլի օրը պետք է ոգնի մորելիզացիայի յենթարկելու ամբողջ մամուլը՝ վերելից միջնակներքև, կատարելու ՀամԿ(բ)Կ 18-րդ համագումարի պատմական վորոշումները, իրականացնելու ստալինյան յերրորդ հնգամյակի կարեվորագույն խնդիրները:

Կոլտնտեսությունների, ՄՏԿ-ների և խորհտնտեսությունների պատի թերթերի համար այդ խնդիրները անպագելիորեն կապված են Համամիութենական


Գյուղատնտեսական Ֆուցահանդեսին նախապատրաստվելու խնդիրների հետ: Դրա համար ել կոլտնտեսական պատի թերթերի խմբկոչների համար մամուլի օրվա հավերժացման լավագույն միջոցն է գործնականորեն մտնել ցուցահանդեսին մասնակցելու իրավունք նվաճելու համար թերթերի ծավալվող մրցության մեջ: Կոլտնտեսային ժողովներում, վորտեղ մամուլի օրը պատի թերթի խմբկոչները հաչիվ են տալու ընթերցողներին իրենց աշխատանքի մասին, թող նրանք պատմեն, թե ինչպես են ոգնում և պիտի ոգնեն կոլտնտեսությունը, կոլտնտեսականներին, գյուղատնտեսության առաջավորներին ցուցահանդեսին մասնակցելու համար անհրաժեշտ ցուցանիշներ ձեռք բերելու, և թե ինչպես իրենք պատի թերթերը պետք է պայքարեն մամուլի պավիլյոնում տեղ նվաճելու համար:

Այդ պատվավոր իրավունքը կնվաճեն սոցիալիստական մրցության մեջ հաղթողները— կոլտնտեսությունների, խորհտնտեսությունների, մեքենատրակտորային կայանների լավագույն մարտական պատի թերթերը՝ մեր գյուղական ստորին մամուլի առաջավորները: Նրանց-պատիվ և տեղ Համամիութենական Գյուղատնտեսական Ֆուցահանդեսում:

Պատ. խմբագիր՝ Վ. ԲԶՆՈՒՆԻ
Սրբագրիչ՝ Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գլխավոր լրագր. Ե 2238 պատ. № 462. տիրաժ 1100

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԺԿԵ-Ի ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
«Խ Հ»-Ի ՏՊԱՐԱՆ ՁԵՐԵՎԱՆ



ՀՀ Ազգային գրադարան



NL0148588

2, 1, 1

159

15042

В. М. ЦЫГАНОВ

Подготовка к всесоюзной сельско-хозяйственной выставке и задачи колхозных стенных газет

Заочные курсы редакторов колхозных и бригадных стенгазет
Ереван 1939 г.